ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Վ. Կ. ԻՍԿԱՆՅԱՆ

Արծրունյաց արտագաղթը Վասպուրականից Բյուզանդիա հանդիսացել է արտակարգ իրադարձություն հայ ժողովրդի պատմական կյանքում։ Այդ մասին քիչ չի խոսվել ուսումնասիրություններում։ Պատմագրության մեջ, սակայն, վերջնականապես ճշգրտված չէ Արծրունյաց արտագաղթի տարեթիվը, միակողմանի ու թերի են լուսաբանված նրա դրդապատճառները։ Հենց այս հարցերն են, որ քննարկման առարկա ենք դարձնում սույն հոդվածում։

Պատմաբանների մի մասը երկրից Արծրունիների հեռանալու պատճառ համարել է թուրքերի հարձակումը[1] Վասպուրականի վրա արևելքից, իսկ մյուս մասը՝ բյուզանդական էքսպանսիան։ Նախօրոք նշենք, որ այդ կարևոր իրընդիրը միակողմանի է քննարկվել ու գնահատվել երկու դեպքում էլ։ Արծրունյաց արտագաղթն ու թագավորության ոչնչացումը Վասպուրականում պայմանավորել են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական պայմանները։

Դեռևս Գագիկ Արծրունու թագավորության ժամանակ, X դարի 30-ական թթ. դելմիկները, որոնք քիչ առաջ իրենց իշխանությունն էին կազմակերպել Ատրպատականում, ներխուժում են Վասպուրական, բայց Անձևացյաց գավառում պարտություն են կրում և նահանջում։ Արծրունյաց թագավորությունը, սակայն, հետագա շրջանում միշտ գտնվում է նրանց հարձակման սպառնալիքի տակ։

Ատրպատականի էմիր Աբլհաճի որդի Մամլան, ըստ Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի՝ 983 թ., ըստ Ասողիկի՝ մոտ 996 թ., մեծ զորքով ներխուժում է Հայաստան, հավանաբար Վասպուրականի վրայով, և հասնում Ապահունիք, Ծաղկոտն ու Բաղրևանդ գավառները, սակայն հայ-վրացական միացյալ զորքից պարտություն է կրում ու նահանջում[3]։

998 թ. նույն էմիր Մամլանը իր այդ կրած պարտության վրեժն առնելու նպատակով «...Ելեալ ի Թաւրիզոյ ի քաղաքէն իւրմէ ի սահմանս Հերայ ծանր ամբոխիւ, լայն բանակաւ՝ անցանէ ընդ աշխարհն Վասպուրականի, գայ իջանէ

---

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 901—903։ Edouard de Muralt. Essai de chronographie Byzantine, Pétersbourg. 1855, էջ 588։ Г. Финле. История Византийской и Греческой империи, книга вторая. Москва, 1878, էջ 344։ Հ. Մանանդյան, Հայասանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում (ձեռագրի իրավունքով), Երևան, 1922, էջ 16 և հտ.։

[2] Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, Երևան, 1947, էջ 633։ N. Adontz. Les Taronites en Arménie et a Byzance, „Byzantion", t. X, fasc. 2, Bruxelles, 1935, էջ 542 և հտ.։

[3] Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 266—267. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 34—37. Սմբատ Սպարապետ, Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկվա, 1856, էջ 21—22։

ի գաւառն Ապահունեաց»։ Մամլանը հայ-վրացական միացյալ ուժերից նոր ծանր պարտություն կրելով հեռանում է Ատրպատական։ Չնայած դրան, Ատրպատականի կողմից մուսուլմանական էմիրների հարձակումները Վասպուրականի վրա չեն դադարում։

Սամվել Անեցին Մամլանի ջախջախումը Ապահունիքում դնում է 1000 թ. և այն վերագրում է հոռոմներին (բյուզանդացիներին)[5]։

Թուրքական զորքերը թե՛ ներխուժման և թե՛ նահանջի ժամանակ անխնա կողոպտել, հրի ու սրի են մատնել Վասպուրականը, աղետալի ու օրհասական վիճակ ստեղծելով նրա բնակչության համար։ Արծրունիները, չկարողանալով սեփական զինվորական ուժերով ապահովել երկրի սահմանների անվտանգությունը, ինչպես կտեսնենք, դիմում են Բյուզանդիայի օգնությանը, որը դադարեցնում է սահմանամերձ էմիրների բռնությունները Վասպուրականի վրա։ Բայց դա երկար չի տևում։

Սամվել Անեցին հաղորդում է երկու տարի անց Վասպուրական կատարված նոր ներխուժման մասին։ «ՌԻ։ (=1002 թ.) Եկին ազգն Թուրքաց և ավերեցին զգաւառն Վասպուրականի. և յոյժ նեղեալ լինէր թագաւորն նոցա Սենեքարիմ։ Վասն որոյ յետ ԻԲ. ամի նեղութեան՝ ետ զաշխարհն իւր ի Վասիլ թագաւորն ի ՆԷ. թվին»[6]։

Ժամանակակից և հետագա շրջանի շատ աղբյուրներ հաղորդում են թուրքերի՝ Վասպուրականի վրա կատարած հաճախակի հարձակումների մասին, առանց նշելու տարեթվերը։

Մի շարք աղբյուրներ վկայում են 1016 կամ 1018 թթ. Վասպուրականի վրա թուրքերի ձեռնարկած արշավանքի մասին[7]։

Պատմիչները տարբեր անուններով են հիշատակում արևելքից Արծրունյաց թագավորությանը սպառնացող հրոսակները։ Վասպուրականի վրա, նրանց

---

4 Ասողիկ, էջ 220։

5 Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104։

6 Նույն տեղում։

7 Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 29։ Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 496—497։ «Գրիգոր Ակռոնցու հիշատակարանը» (տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 48) և այլն։

8 Georgi Cedreni, Compendium Historiarum. Corpus scriptorum historiae Byzantinae, t. II, Bonnae, 1839, էջ 464։ Մ. Ուռհայեցի, էջ 46։ Սմբատ, էջ 26։ «Անանուն ժամանակագրություն», Երևան, 1940, էջ 6։ Գրիգոր Կամսխեցի կամ Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 3։ Կիրակոս վարդապետ (տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, էջ 205—206)։ Մ. Ուռհայեցու ժամանակագրության հնագույն ձեռագրում, որը հիմք է հանդիսացել Վաղարշապատի հրատարակության համար, թուրքերի հարձակումը նշված է նկե (=1016) թվականին, իսկ մի շարք այլ ձեռագրերում, որոնց հիման վրա լույս է տեսել Երուսաղեմի հրատարակությունը, նշված է նկէ (=1018) (տե՛ս նույն տեղում)։ Սմբատ Սպարապետը, որը այդ ժամանակի իրադարձությունները շարադրելիս հիմնականում հետևել է ու ընդօրինակել Մ. Ուռհայեցուն, թուրքերի հարձակումը դնում է նկե (—1016) թ.։ Ենթադրվում է, որ Մ. Ուռհայեցու նախնական բնագրում գրած ն տառը հետո փոխվել է է-ի։ Ուշ շրջանի մի շարք գրողների մոտ թուրքերի այդ հարձակումը դրված է 1018 թ.։ Պատմաբաններից ոմանք, առանց մատնացույց անելու աղբյուրը, նշում են Վասպուրականի վրա 1019 (Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 651, 653) և 1021 թթ. (Ս. Դուրյան, Ազգային պատմութիւն, Երուսաղեմ, 1934, էջ 373) թուրքերի արշավանքի մասին։

ասելով, հարձակվել են «ի պարսից», «թուրք», «ազգն թուրքաց», «յազգէն Իսմայելի», «մերձաբնակ հաղարացիներից», «մուղալ»[9]։

Հայ պատմիչները, մանավանդ Թովմա Արծրունու Պատմության շարունակողն ու Մատթեոս Ուռհայեցին, մոայլ գույներով են նկարագրում թուրքերի ներխուժումը Վասպուրական ու հաղորդում, որ այդ հարձակումը միանգամայն հուսահատական ազդեցություն է թողել Արծրունիների վրա։

Մատթեոս Ուռհայեցու ասելով, «Ընդ աւուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին խուժադուժ ազգն անօրինացն». «զարթեցաւ վիշապն մահաշունչ հանդերձ մահաբեր հրով», «օձք թեւաւորք հասին և կամին ցոլանալ ընդ ամենայն աշխարհս հաւատացելոցս Քրիստոսի»[10]։ Իսկ Թովմա Արծրունու պատմության շարունակողի վկայությամբ, այդ թուրք հրոսակները «տիրեցին աշխարհի ի ծովէն արևելից մինչև ցծովն արևմտից, և ոչ մնաց ի նոցանէ մինչև ցքարանձաւ մի որ ոչ մատնեաց Աստուած ի ձեռս նոցա. և նոքա ունելով զրնութիւն արիւնարբու զազանի. զի են ազգք ահաւոր տեսլեամբ, զի տեսիլ զիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողսն և ահարեկ առնէ»[11]։

Վասպուրականի վրա թուրքերի հարձակման մասին Թովմա Արծրունու պատմության շարունակողի տեղեկությունը, ինչպես իրավացիորեն նկատել են, անշուշտ չափազանցված վկայություն է[12]։ Նույնը նկատվում է նաև Մատթեոս Ուռհայեցու մոտ։

Իրոք, դժվար չէ կռահել, որ պատմիչները, ինչպես այդ պարզ զգացվում է նրանց վերոհիշյալ տեղեկությունից, թուրքերի այդ հարձակումը նկարագրում են հետագայում տեղի ունեցած թուրք-սելջուկյան հրոսակների ամայացուցիչ արշավանքների ու նրանց գործած ահավոր սրածության — ավերածությունների տպավորությունների տակ։ Եվ, դժբախտաբար, շատ ուսումնասիրողներ սխալմամբ թուրքերի այդ ներխուժումը Վասպուրական նույնացրել են սելջուկյան արշավանքների հետ[13]։ Մինչդեռ աղբյուրներում ոչ մի փաստ չկա 1016—1018 կամ 1021 թթ. Վասպուրականի վրա սելջուկների որևէ հարձակման մասին։ Ուշ շրջանի հայ պատմիչները, նրանց հետևող շատ ուսումնասիրողներ սխալվում են, երբ Արծրունյաց թագավորության հետագա ամբողջ բախտը սովորաբար բացատրում են թուրքերի միայն վերոհիշյալ արշավանքով։ Միանգամայն հասկանալի է, որ ֆեոդալական մասնատված Հայաստա-

---

9 Ա. Լաստիվերտցի, էջ 20։ Վարդան Արևելցի (տես Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861), էջ 125։ Կիրակոս Վարդապետ (տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց. հատ. Ա), էջ 205—206։ Թ. Արծրունի, էջ 497։ Մ. Ուռհայեցի, էջ 17։ Յ. Անեցի, էջ 104։ «Անանուն ժամանակագրություն», էջ 6։ Գրիգոր Կամախեցի, էջ 3։ Գրիգոր Ակռոեցու հիշատակարան (տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց. հատ. Ա, էջ 248)։ Cedreni, t. II, էջ 461։ Սմբատ, էջ 27։

10 Մ. Ուռհայեցի, էջ 46—47։

11 Թ. Արծրունի, էջ 497։

12 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 34։

13 M. J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I, Paris, 1818, էջ 368։ Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 262—263։ G. Schlumberger, L'Epopee Byzantine a la fin du dixième siècle, t. II, էջ 436, 501, t. III, էջ 35։ Charles Diehl, Histoire Générale, t. III, Paris, 1944, էջ 481—482։ Մ. Օրմանյան, Ազգապատում, Պոլիս, 1912, էջ 1197 և հտ.։

նում չկար ուժերի համախմբվածություն արտաքին թշնամու դեմ։ Սակայն թուրքերի նշված հարձակումը պետք է տարբերել բուն թուրք-սելջուկյան այն արշավանքներից, որոնք Հայաստանի դեմ սկսվել են ավելի ուշ, 1048 թ.։ Վասպուրականի դեմ 1016—1018 թթ. հարձակումը, ինչպես այժմ պարզվել է, պետք է վերագրել պարսկական հարևան իշխանություններ, որի հարձակվող զորքի մեջ թուրքերը հավանաբար ծառայել են որպես վարձկան հեծելազորք, որ այդ ժամանակ խիստ տարածված էր պարսկա-արաբական իշխանություններում[14]։

1021 թ. թուրքերը, Վարդան Արևելցու վկայությամբ, արշավանք են ձեռնարկում Դվինի ուղղությամբ, որի ժամանակ սպանվում է քաջ զորավար Վասակ Պահլավունին[15]։ Մարմաշենի 1029 թ. արձանագրությունն այդ ընդհարումն անվանում է «Թուրքաց պատերազմ»[16]։ Այս արշավանքը ձեռնարկել են Հայաստանի հարևան գելմիկները, որոնց զորքի մեջ ևս, հավանաբար, եղել են թուրք վարձկաններ։ Թե որքանով է այդ հարձակումը շոշափել նաև Վասպուրականը՝ մեզ հայտնի չէ, բայց նա չէր կարող իր ազդեցությունը գործած չլինել Արծրունյաց թագավորության վրա և չարագացնել արտագաղթը։

Սխալ կլիներ կարծել, թե Արծրունիների արտագաղթը տեղի է ունեցել սոսկ թուրքերի հարձակման սպառնալիքի հետևանքով։ Այդ տեսակետից հայ պատմիչների մոտ էլ տեղեկությունները միակողմանի են, երբ նրանք Վասպուրականից Արծրունիների հեռանալու միակ դրդապատճառը սովորաբար համարում են արևելքից կատարվող թուրքերի հարձակումը, աչքաթող անելով բյուզանդական ագրեսիայի զարգացումը արևմուտքից։ Ավելին, նրանք կայսրությունը համարել են մի պետություն, որն իբր թե ամեն կերպ շահագրգռված է եղել արտաքին թշնամիների դեմ հայկական իշխանությունների պաշտպանությամբ։ Այդ տեսակետից ուշագրավ է մանավանդ Թովմա Արծրունու պատմության շարունակողի վկայությունը։ Այս պատմիչի ասելով, թուրքերի հարձակման ժամանակ Սենեքերիմ թագավորին օգնության ոչ մի հույս չկար իբր «...բաց ի տեառնէ, և օգնականութիւն տեառնէ ի թիկունս արքային Յունաց, և յայնժամ ունէր զկայսերական իշխանութիւնն զաստուածապահ քաղաքին զԿոստանդնուպոլսի, այր ոմն աստուածասէր և բարեպաշտ Վասիլ անուն կոչեցեալ. և ոչ էին ձեռնհաս թագաւորն Յունաց ի վերայ աշխարհին Հայոց, այլ ինքեանք կամաւ ունէին զտէրութիւնս գաւառաց իւրաքանչիւր ոք, և ոչ ժուժէին յարձակման այլազգեաց։ Յայնժամ իբրև որդի առ հայր դիմեցին մնացորդք տանն Թորգոմայ առ թագաւորն Յունաց. և նոքա լցեալ աստուածային սիրով՝ զթացան յաղաչանս որդւոցն, և կոչեցեալ առ իւրեանս յիւրաքանչիւր գաւառաց՝ և տային պարգևս, և կարգեցին ի գուռն արքունի և տային փոխանակ քաղաքացն քաղաքս մեծամեծս և փոխանակ բերդիցն բերդս անմատոյցս և գաւառս և գեօղս և ագարակս և սուրբ մենաստանս»[17]։

Հայ պատմիչի եկեղեցական խախուտ դիրքերից բխող այս վկայությունը անընդունելի է։ Հայտնի է, որ Արծրունիները ընդարձակ Վասպուրականի փոխարեն բյուզանդիայում ստացել են սահմանափակ տիրություններ Սեբաստիա

14 Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 37. տե՛ս նաև նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Դ, էջ 37—39։

15 Վարդան Արևելցի, էջ 131։

16 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 16։

17 Թովմա Արծրունի, էջ 499—500։

կենտրոնով, իսկ փոխանակությունը, ինչպես կտեսնենք, ամենևին էլ չի հանդիսացել «հոր և որդու» գործարք։ Աղբյուրներում եղած փաստերը, ընդհակառակը, բացահայտում են X—XI դարերում դեպի Հայաստան, այդ թվում նաև դեպի Վասպուրական զարգացող բյուզանդական էքսպանսիան, որին կուլ են գնում ու ոչնչանում հայկական ֆեոդալական իշխանությունները, այդ թվում նաև Արծրունյաց թագավորությունը։

IX դարի վերջին քառորդին բյուզանդական բանակը, օգտվելով Բաղդադի խալիֆաթի թուլացումից, ճեղքում է նրա ամրացրած ռազմագիծը արևելքում և նվաճում նաև Բարձր Հայքի գավառները։ X դարի առաջին կեսին կայսրությունը հաղթականորեն շարունակում է իր հետագա առաջխաղացումը Հայաստանում։ Բյուզանդիան, օգտվելով Տարոնի վերջին իշխան Կյուրոպաղատ Աշոտ Բագրատունու մահից, 966—967 թթ. գավթում է Տարոնը։ Կայսրությունը այնուհետև ընդլայնում է իր նվաճումները Վանա լճի հյուսիսում՝ Վասպուրականի ուղղությամբ։

968 թ. բյուզանդական բանակը Տարոնից անցնելով Ապահունիք գավառը, դրավում է Մանազկերտ քաղաքը[18]։ Վերջապես, Վասիլ Բ կայսրը (976—1025) 1000 թ. գրավում է Տայքի իշխան, անզավակ Դավիթ Կյուրապաղատի տիրությունները։ Բյուզանդիային են միացվում Տայքը և վերջինիս ենթակա Բասենը, Հարքը և Ապահունիքը[19]։ Ձևք բերելով Ապահունիքը, կայսրությունը սահմանակից է դառնում Արծրունյաց թագավորությանը, ձգտելով գրավել նաև Վասպուրականը։

Կայսրության կողմից Արծրունյաց թագավորության ոչնչացումը տարբեր կերպ է մեկնաբանվել։ Վասպուրականի գրավումը, Լեոյի ասելով, բյուզանդական «կոպիտ նվաճողական կցման ձև» չի ընդունել, որովհետև Վասիլ Բ կայսրը «բարեկամական հարաբերություններ ուներ Սենեքերիմի հետ» և «Հիշում էր իր հայկական ծագումը»[20]։

Բյուզանդիան, այլ պատմաբանի կարծիքով, ընդհակառակը, 1000 թ. բանակով սպառնում է Վասպուրականին, բայց Բագրատունյաց և Արծրունյաց թագավորությունների միացյալ ուժերի զորեղ դիմադրությունը կանգնեցնում է նրա հետագա առաջխաղացումը։ Այնուամենայնիվ Սենեքերիմ թագավորը նեղվելով Բյուզանդիայի և Ատրպատականի կողմերից կատարվող արշավանքներից, ի վերջո, 1021 թ. ստիպված գաղթում է Բյուզանդիա[21]։

Նման մեկնաբանությունները, մեր կարծիքով, ճիշտ չեն։ Արծրունիների հեռացումից հետո, ինչպես կտեսնենք, Վասպուրականի անցումը կայսրությանը իրոք ընդունում է «կոպիտ նվաճողական կցման ձև»։ Բացի դրանից բոլոր կայսրները, այդ թվում նաև Վասիլ Բ-ն, իրենց նվաճողական քաղաքականությունը վարել են հիմք ընդունելով Բյուզանդիայի պետական շահերը և ոչ թե իրենց ազգային ծագումը։ Վասպուրականի վրա բյուզանդական բանակի հարձակման կամ արշավանքի մասին մեզ հայտնի աղբյուրներում ոչ մի վկայություն չկա։ Արծրունիների և կայսրության միջև ռազմական ընդհարում չի եղել։

---

18 Ս տ. Ա ս ո ղ ի կ, էջ 183։

19 Ս տ. Ա ս ո ղ ի կ, էջ 192, 278։ «Անանուն ժամանակագրություն», առաջաբանով և ծանոթագրություններով կազմեցին Հովհ. Մանվելյան, Հար. Արբահամյան, Երևան, 1940, էջ 6։

20 Լ ե ո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 654։

21 Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Հայաստանը IX—XI դարերում, Երևան, 1959, էջ 256—257։

Բյուզանդիան, ինչպես երևում է աղբյուրներից, Վասպուրականի թագավորության նկատմամբ իր էքսպանսիան առաջ է տարել շատ նուրբ ձևով։ Ռազմական մեծ ուժի հետ միասին խոշոր դեր է խաղացել նաև բյուզանդական փորձված ու ճկուն դիվանագիտությունը։ Կայսրությունը օգտվել է արևելքում Վասպուրականի համար ստեղծված ծանր դրությունից, Արծրունիներին ենթարկել է իր ազդեցությանը սկսած X դարի վերջից։ Այդ ժամանակ նկատելիորեն ուժեղանում է բյուզանդական ազդեցությունը Արծրունյաց թագավորության վրա։ Երբ Վասիլ Բ կայսրը Տայքին տիրելու համար մեծ բանակով գալիս է Հայաստան «...և ինքն (Վասիլ Բ-ն—Վ. Ի.) երթեալ անցանէ ընդ Հարք և ընդ Մանազկերտս», այսինքն՝ Ապահունիք գավառը, ապա Նկեղյաց գավառի Հավաճիչ քաղաքից արևելք շարժվելիս, հավանաբար Վանանդի սահմանների մոտ, նրան են ներկայանում նաև Վասպուրականի Գուրգեն և Սենեքերիմ Արծրունիները բազմաթիվ ֆեոդալների ուղեկցությամբ, կայսեր հետ վարելով բանակցություններ։

Արծրունիները, ինչպես տեսանք, այդ ժամանակ ունենալով համեմատաբար թույլ ռազմական ուժեր, նեղվում էին հարևան մուսուլմանական իշխանությունների հարձակումներից, մի հանգամանք, որը վարպետորեն օգտագործում է Բյուզանդիան։ Վասիլ Բ-ն իր պաշտպանության և հովանավորության տակ առնելով Վասպուրականը և իր մոտ եկած Արծրունի իշխաններին պատվելով արքունատուր նվերներով, այնուհետև, ասում է պատմիչը, «...հրովարտակ առաքեալ առ մերձաւոր ամիրայսն Տաճկաց, զի մի՛ մեղիցեն աշխարհին Վասպուրականի՝ դադարեցոյց զառ և զդերութիւն և զհարկապահանջ բռնութիւնն»[23]։ Մատթեոս Ուռհայեցին անշուշտ այդ հանգամանքն ի նկատի ունենալով է, որ հաղորդում է. «Իսկ յամի ՆԽԹ (—1000) թուականութեանս Հայոց եղև սէր և միաբանութիւն մեծ ընդ թագաւորն Վասիլ և ընդ Սենեքարիմ արքայն Հայոց»[24]։

Բյուզանդիան, այդպիսով, հայկական իշխանություններին, մանավանդ Արծրունիներին բացահայտ կերպով ցուցադրել էր իր ռազմական անվիճելի գերազանցությունը արևելքի մուսուլման էմիրությունների նկատմամբ և խիստ ուժեղացրել իր ազդեցությունը Վասպուրականի վրա։ Վասիլ Բ-ն այդ ժամանակ սկսել էր Արևմտյան Հայաստանից հայերին վերաբնակեցնել Բյուզանդիայի զանազան մասերում՝ երկրագործ ազատ գյուղացիության քանակը ստվարացնելու և ուժեղ բանակ կազմակերպելու նպատակով։ «Բազիլիոս (Վասիլ) Բ-ի ժամանակ,— գրում է ակադ. Մանանդյանը,— արդեն Հայաստանում ևս, ինչպես Բուլղարիայում և Վրաստանում, սկսվեց գործադրվել հայ բնակչության տեղափոխումը Միջագետք ու Փոքր Ասիա, քաղաքական ու վարչական հատուկ նպատակներով»[25]։ Կայսրությանը շուտով հաջողվում է իր այդ քաղաքականությունը իրագործել նաև Վասպուրականի թագավորության նկատմամբ։

22 Ա. Լաստիվերտցի, էջ 5։

23 Ասողիկ, էջ 277, 281։ Կայսրությունը, ինչպես կարծում են, կարող է պատահել, որ ինքը դադտնի հրահրած լիսի թուրք էմիրներին հարձակվելու Վասպուրականի վրա (Ս. Շալյան, Վասպուրականի թագավորության պատմությունից, էջ 60, ծան. 1)։ Աղբյուրներում սակայն նման ենթադրության որևէ հիմք չկա։

24 Մ. Ուռհայեցի, էջ 42. հմմտ. Սմբատ, էջ 24։

25 Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 15—16։

Մինչև 1021 թ. որքան սաստկանում են թուրքերի հարձակումները արևելքից, այնքան ուժեղանում են բյուզանդական ազդեցությունը Վասպուրականի վրա արևմուտքից և Արծրունիների հակվածությունը դեպի կայսրությունը՝ հանգեցնելով արտաղաղթի։

Վասիլ Բ կայսրը 1018 թ. գրավել էր Բուլղարիան և կուրացրել 15000 բուլղար ռազմագերիների։ «Բուլղարասպան» մականունը վաստակած նույն կայսրը 1021 թ. մեծ բանակով գալով արևելք, ավերում, ամայացնում է Քուռ գետից հարավ ընկած, հայերով ու վրացիներով բնակեցված 12 գավառներ, գերելով, կուրացնելով ու սպանելով շուրջ 200000 մարդ[27]։

Կայսրությունն այդ անօրինակ դաժանություններով ցուցադրել էր իր ռազմական հզորությունը, որն անշուշտ իր խոշոր դերն էր խաղացել Արծրունյաց արտաղաղթի գործում։ Վերջինս, մեզ թվում է, պատմական այդ իրադարձությունների պատահական զուգադիպությունը չէր։

Մատթեոս Ուռհայեցու և նրան հետևող Սմբատի ասելով, արևելքից թուրքերի հարձակման վտանգի ժամանակ ինքը՝ Սենեքերիմը «խորհեցաւ տալ զաշխարհ հայրենեաց իւրոց յարքայն Յունաց Վասիլ և առնուլ զՍեբաստիա և զրէր վաղվաղակի առ թագաւորն. զոր իբրեւ լուաւ թագաւորն Վասիլ՝ ուրախ եղեւ և ետ նմա զՍեբաստիա. և տայր Սենեքերիմ զաշխարհն Վասպուրականի... Եւ առաքեաց թագաւորն Վասիլ առ Սենեքերիմ առաքել առ նա զԴաւիթ թագաւորական ճոխութեամբ և առաքեաւ զորդին իւր»[28]։

Այդ մասին այլ կերպ է վկայում XII դարի ժամանակագիր Միքայել Ասորին. «1300 (=989—990) թ. սկսվեց հայոց դաղթը Մեծ Հայքից և ամենից առաջ Կապադովկիայի շրջանից։ Եվ Վասիլ կայսրն էր, որ Հայոց ձեռքից առավ Սենեքերիմ թագավորի երկրները և դրանց փոխարեն տվեց Կապադովկիայի Սեբաստիան»[29]։

Որ Վասպուրականի հանձնումը կայսրության կամավոր ու խաղաղ բնույթ չի կրել, ինչպես պատկերում են հայ պատմիչները և նրանց հետևող որոշ պատմաբաններ, երևում է մանավանդ XI դարի պատմիչ Կեդրենոսի հետևյալ վկայությունից. Արծրունիները դաղթում են Բյուզանդիա և կայսրությանը հանձնում Վասպուրականը, «...որին իշխան ուղարկվելով, պատրիկ Վասիլ Արդիրոսը, ամեն բանի մեջ անհաջող երևալով, պաշտոնից հանվեց և նրա տեղն ուղարկվեց Նիկեփոր Կոմնենոս զորավարը, որը գնալով այդ գավառը մասամբ համոզելով, մասամբ բռնությունն գործադրելով, գավառը հպատակեցրեց կայսրին»[30]։

Այս ժլատ տեղեկությունը մեզ հետաքրքրող վերին աստիճանի կարևոր խնդրի մասին, թվում է, շատ բան է ասում, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ վկայությունը անողը բյուզանդացի պատմիչ է՝ հայերի մղած անկախության պայքարին չհամակրող և կայսրության նվաճողական քաղաքականությունը գովերգող։ Այնուամենայնիվ Կեդրենոսի այդ ակնարկից պարզվում է,

[26] Michael Glycas, Annales, Bonnae, 1836, էջ 578։

[27] Извлечения из летописи Яхъи Антиохинского, издал, перевел и объяснил Барон В. Р. Розен. Записки императорской Ак. наук, т. 44, СПб., 1883, էջ 62։ Ա. Լաստիվերտցի, էջ 13—15։

[28] Մ. Ուռհայեցի, էջ 48—49։ Սմբատ, էջ 27։

[29] Chronique de Michel le Syrien. Patriarche Yacobite d'Antioche (1166—1199), par J. B. Chabot, Paris, 1906, հատ. III, մաս 2, էջ 133։

[30] Cedreni, t. II, էջ 464։

որ Վասպուրականի բնակչությունը դեմ է եղել Արծրունիների կազմակերպած արտագաղթին և անմիջապես ազատագրական պայքար է մղել բյուզանդական վերահաս լծի դեմ։ Այդ կարևոր փաստը միաժամանակ անվիճելիորեն հաստատում է, որ Վասպուրականի թագավորությունը ի վերջո զոհ է դնացել բյուզանդական էքսպանսիային։ Պատահական չէ, որ Վասիլ Բ կայսրը 1022 թ. ճնշելով արխազ-վրացական ապստամբությունը, հենց Արծրունիների դաղթի տարում մեծ բանակով շարժվում է դեպի իր նոր սահմանագլուխը, և, ինչպես ժամանակակից պատմիչն է վկայում, մուտք գործում Արծրունյաց դավառը[31]։

Սեբաստիայի հետ Վասպուրականի փոխանակությունից և Բյուզանդիայում վերաբնակվելուց խիստ դժգոհ են եղել նաև Արծրունիները։ Այդ երևում է հետևյալ փաստից. 1022 թ. դարձանը Փոքր Ասիայում բռնկում է Նիկեփոր Ծովիզի ապստամբությունը Վասիլ Բ կայսեր դեմ։ Սենեքերիմի որդի Դավիթ Արծրունին, վկայում է Ա. Լաստիվերտցին, «...յայնժամ ի խորհուրդ միաբան ապստամբացն էր, և հաւատարիմ առ նոսա»[32]։ Դավիթը, Մատթեոս Ուռհայեցու ասելով, իր հայոց զորքով միանում է Ծովիզին, «Եւ Ծովիզն յոյժ սիրէր զԴաւիթ և խոստանայր նստուցանել զնա յաթոռ թագաւորութեան Հայոց, բայց Դաւիթ ոչ կամեցաւ լուծանել զգաշինս Վասլին»[33]։ Ծովիզի ապստամբությունը ապագա չուներ։ Դավիթը, ի վերջո, լսում է կայսրին և դավադրաբար սպանում Ծովիզին։

Այս բոլորից երևում է, որ Արծրունիների վերաբնակեցումը Բյուզանդիայում կրել է ոչ թե կամավոր, այլ հարկադիր բնույթ։ Արծրունյաց արտագաղթը, իր հերթին, հանդիսացել է հետևանք երկրի ոչ միայն արտաքին, այլև ստեղծված ներքին աննպաստ քաղաքական պայմանների։ Հայաստանում այդ ժամանակ իշխում էր ֆեոդալական մասնատվածությունը։ Կոստանդին VII Ծիրանածինն իր «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» աշխատության մեջ բացի Բագրատունյաց թագավորից, որը կոչվում էր արքայից արքա, Հայաստանում թվում է նաև ինը այլ հայկական ֆեոդալական վասալական իշխանություններ[34]։ Այդ բազմաթիվ անկախ իշխանությունների միջև չկար ուժերի համախմբվածություն արտաքին թշնամիների դեմ, նրանցից յուրաքանչյուրը հոգ էր տանում միայն իր սահմանների և իր ֆեոդալական նեղ շահերի պաշտպանության մասին։ Ավելին. նրանք հաճախ միմյանց դեմ մղում էին պառակտիչ պատերազմներ։ Նախարարական ներքին պառակտումները և արյունահեղ խռովությունները, ինչպես ճիշտ նկատում է ակադ. Հ. Մանանդյանը, նույնքան զորեղ էին Բագրատունյաց թագավորության շրջանում, ինչպես հայ Արշակունիների ժամանակ։ Հայկական իշխանությունները արտաքին հարձակումներից պաշտպանվում էին մեծ մասամբ ամեն մեկը անջատ ու առանձին, որը բնականաբար շատ դժվար պիտի լիներ[35]։

1020 թ. Անի-Շիրակ Բագրատունյաց իշխանության թագավոր Գագիկ Ա-ի մահից հետո նրա որդիների միջև մղվել էր գահակալական արյունահեղ պատերազմ։ Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին օգնական զորք

31 Ա. Լաստիվերտցի, էջ 26—27. հմմտ. Մ. Ուռհայեցի, էջ 51. Սմբատ, էջ 31։
32 Ա. Լաստիվերտցի, էջ 20։
33 Մ. Ուռհայեցի, էջ 51, հմմտ. Սմբատ, էջ 30։
34 Constantini Porphyrogen, De cerimonis aulae Byzantinae, Bonnae, 1829, էջ 687։
35 Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 7։

էր տվել Աշոտին եղբոր՝ Հովհաննես-Սմբատի դեմ պատերազմելու համար[36]։ Սենեքերիմը դրանով ավելի էր բորբոքել գահակալական երկպառակությունը Բագրատունյաց թագավորության մեջ։ Մինչդեռ Անի-Շիրակ թագավորությունը, ինչպես կարծում են, եթե ներքին խռովություններով չզբաղվեր և օգներ Արծրունիներին, Վասպուրականի թագավորությունը կպահպաներ իր գոյությունը[37]։ Դառնալով Անիի թագավոր, Հովհաննես-Սմբատը բնականաբար Սենեքերիմին համարում էր իր թշնամին։ Արծրունիներին չէին օգնում նաև հայկական մյուս իշխանությունները։ Սենեքերիմ թագավորը, ասում է պատմիչը, թուրքերի հարձակման ժամանակ «...ոչ զոյր այլ ուստեք օգնականութիւն բաց ի տնառնէ»[38]։ Վասպուրականի թագավորությունը միայնակ իր վրա էր կրում արևելքից կատարվող թուրքերի ներխուժման հարվածները, իսկ արևմուտքից բյուզանդական էքսպանսիայի ճնշումը։ Ահա թե ինչու նա ի վերջո տեղի տվեց բյուզանդական էքսպանսիայի առաջ՝ փոխանակության հարցի շուրջ բանակցություններ սկսելով կայսրության հետ։

Անհրաժեշտ է սակայն տարբերել փոխանակության շուրջ կայսրության և Արծրունիների միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակը բուն արտաքսման տարեթվից։ Դրանք միաժամանակ տեղի չեն ունեցել։ Նախ բանակցության վայրի և տարեթվի մասին։

Որտե՞ղ են տեղի ունեցել փոխանակության բանակցությունները և համաձայնությունը։ Աղբյուրները բանակցությունների վայր նշում են Կոստանդնուպոլիսը։ Վասիլ կայսրը ուրախությամբ ընդունում է փոխանակության մասին Սենեքերիմի առաջարկը։ «Եւ առաքեաց,— ասում է Մ. Ուռհայեցին,— թագաւորն Վասիլ առ Սենեքերիմ առաքել առ նա զԴաւիթ թագաւորական ճոխութեամբ և առաքեաց զորդին իւր, ընդ նմին և որդիս ազատաց և զեպիսկոպոսն Տէր Էղիշէ և բեռնակիր ջորիս 3, բարձեալ գանձիւք և պէսպէս կազմութեամբ, և տաճիկ ձիս Ռ. և այսպիսի փառաւորութեամբ եմուտ Դավիթ ի Կոսպանդնուպոլիս՝ և դղրդեցաւ քաղաքն և ելին ամենեքեան ընդ առաջ նորա և զարդարեցին զփողոցս և զապարանս և գանձս բազումս ցանէին ի վերայ նորա։ Եւ յոյժ ուրախացաւ թագաւորն Վասիլ ընդ տեսիլն Դաւթի և տարաւ զնա ի սուրբն Սոփի և արար զնա իւր որդեգիր և պատուէին զնա որպէս զորդի թագաւորի։ Եւ ետ նմա թագաւորն բազում պարգևս և դարձոյց զնա առ հայրն իւր և ետ նմա զՍեբաստիա բազում գաւառօք. և ելեալ Սենեքերիմ ամենայն ընտանեօք իւրովք և ռամկօք եկն ի Սեբաստիա և անտերացաւ աշխարհն Հայոց ի թագաւորաց և յիշխանաց։

Ի թուականութեանս Հայոց ՆՀ (1021) ելանէր Վասիլն յարեւելս անթիւ զօրօք և խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի և զԿարս»[39]։

Ավելի ուշագրավ է Սեբաստիայի շրջակայքի Դիվրիկի վանքի սրբերի մասնատուփի վրայի արձանագրությունը, որը հաղորդում է. «Յամի փրկչին 1021. Հայոց թվին ՆՀ. ամին Աստուածընկալ սուրբ Նշանս այս ի ժամանակս Յունաց Վասլի կայսերն Կոստանդնայ Դաւիթ որդին Սենեքերիմայ հրամանաւ հօրն բազում ընծայիւք գնաց առ Վասիլ կայսրն հանդերձ ծառայիւք, քահանա-

36 Մ. Ուռհայեցի, էջ 7—8։ Սմբատ, էջ 7։

37 Հ. Հարությունյան, Հայաստանը IX—XI դարերում, Երևան, 1959, էջ 259։

38 Թ. Արծրունի, էջ 499։

39 Մ. Ուռհայեցի, էջ 49։ Նույնը տե՛ս նաև Սմբատ, էջ 28 և «Անանուն ժամանակագրություն», էջ 6։

յիւր և Ռշտունեաց էդիշէ եպիսկոպոսիւ. թէ զխորհուրդ Սենեքերիմ արքային ծանուցեն առ կայսրն. յորժամ հասին ի մեծն Պոլիս, կայսրն այն բազում սիրով ընկալաւ զնոսա և կատարեաց զխնդիր Սենեքերիմ արքային և ետ նմա հաստատուն նամակաւ զամենայն երկիրն Սեբաստիոյ հանդերձ ամենայն դաւառօք իւրովք մինչև ի դետն Եփրատայ»[40]։

Աղբյուրների այս տեղեկությունները կասկած չեն թողնում, որ Վասպուրականի փոխանակության շուրջ բանակցությունները կայսրության հետ տեղի են ունեցել Կոստանդնուպոլսում 1021 թ., անշուշտ Վասիլ կայսեր արևելք գալուց առաջ։

Պատմական ուսումնասիրություններում որպես բանակցությունների վայր սովորաբար նշված է Կոստանդնուպոլիսը[41]։

Հայտնվել է սակայն նաև այլ տեսակետ։ Ֆրանսիական հայտնի բյուզանդագետ Գ. Շլյումպերժեն[42], իսկ նրան հետևելով նաև Լեոն գտնում են, որ Վասպուրականի փոխանակության շուրջ թագաժառանգ Դավթի բանակցությունները կայսեր հետ տեղի են ունեցել ոչ թե Կոստանդնուպոլսում, այլ Տրապիզոնում։ Պրոֆ. Լեոյի ասելով, Դավիթ Արծրունին բանակցություններ վարելու համար չէր կարող Կոստանդնուպոլիս գնալ, քանի որ կայսրը այդ ժամանակ գտնվում էր Տրապիզոնում։ Գահաժառանգի Կոստանդնուպոլիս գնալու տեղեկությունը առաջացել է իբր այն հանգամանքից, որ Տրապիզոնը Կոստանդնուպոլիս ճանապարհի վրա է և այստեղ էլ կա ս. Սոֆիայի անունով եկեղեցի[43]։

Լեոյի այս մեկնաբանությունը, որին առաջ հետևել ենք նաև մենք[44], հիմնավորված և համոզիչ չէ։ Ճիշտ չէ, թե քանի որ 1021 թ. Վասիլ կայսրը գտնվում էր արևելքում, Կոստանդնուպոլսում նրա հետ հանդիպումը հնարավոր չէր։ Աղբյուրներում ամենևին էլ չի ասված, թե կայսրն այդ ամբողջ տարին գտնվել է արևելքում։ Մատթեոս Ուռհայեցին, ընդհակառակը, ասում է, որ Վասիլ կայսրը հայոց ՆՀ (1021) թվականին զորքով գալով արևելք, հաղթում է արխազ-վրացական թագավոր Գեորգիին. «Եւ կացեալ Վասիլն անդ ամիսս Գ. մինչեւ հաւանեցոյց զնոսա և ի Տրապիզոն ձմերեաց»[45]։ Այս տեղեկությունից երևում է, որ Վասիլը արևելք է եկել աշնան սկզբին։ Քիչ ավելի վաղ ժամանակի աղբյուրի վկայությամբ արխազ-վրացական գավառներում կազմակերպելով ապստամբների մեծ կոտորած, «կացեալ թագաւորն Վասիլ յայնմ աշխարհի ամիսս վեց և հաւանեցոյց զնոսա և ինքն դարձեալ ի Տրապիզոն ձմերեաց»[46]։ Նշանակում է, դրանից առաջ կայսրը կարող էր լինել Կոստանդնուպոլսում։ Յահյա Անտիոքացին ասում է, որ Վասիլը, իրեն հպատակեցնելով Բուլղարիան (1018 թ.), գալիս է Կոստանդնուպոլիս[47]։

40 Տե՛ս Գ. Սրվանձտյան, Թրբոս աղբար, մասն Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 34։

41 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 903։ Մ. Օրմանյան, Ազգապատում, Պոլիս, 1912, էջ 1197 և հտ.։

42 G. Schlumberger, L'Epopee Byzantine a la fin du dixième siècle, հատ. II, էջ 501։

43 Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 654—655։

44 Տե՛ս «Գիտական աշխատությունների ժողովածու Խ. Արովյանի անվան մանկ. ինստիտուտի», № 6, էջ 119—120։

45 Մ. Ուռհայեցի, էջ 50։ Նույնը տե՛ս Սմբատ, էջ 29։

46 «Տիսիլ սր վարդապետին Յոհաննիսի՝ որ մականուն Կոզեռն կոչի»։

47 Яхъя Антиохийский, էջ 61։

Անընդունելի է նաև Ս. Շալչյանի տեսակետը, թե գահաժառանգ Դավիթը Վասպուրականի փոխանակության համաձայնությունը Կոստանդնուպոլսում կայացրել է 1016 թ., իսկ արտագաղթը տեղի է ունեցել հինգ տարի հետո՝ 1021[48]։

Գ. Շլյումպերժեն օգտվել է XI դարի արաբ պատմիչ Յահյա Անտիոքացուց և հավանաբար հիշյալ տեսակետը հայտնելիս ի նկատի է առել նրա տեղեկությունը։ Սակայն այստեղ, ինչպես կտեսնենք ստորև, պարզ ասված է, որ երբ 1021 թ. Վասիլ կայսրը գալով արևելք մեծ դաժանություններ է գործադրում արխազ-վրացական ապստամբների դեմ ու ձմռելու գնում Տրապիզոն, այդ ժամանակ Արծրունիները իրենց տիրությունները զիջում են կայսրին, այսինքն՝ գաղթում են Բյուզանդիա։ Ոչ մի խոսք Տրապիզոնում Վասպուրականի փոխանակության շուրջ բանակցությունների մասին։

Այժմ արտագաղթի տարեթվի մասին։ Պատմագրության մեջ, ինչպես ասացինք, դեռևս ճշտված չէ Արծրունիների արտագաղթի տարեթիվը։ Պատմական ուսումնասիրություններում առ այսօր նշվել են արտագաղթի հիմնականում երեք տարբեր տարեթվեր՝ 1016[49], ավելի շատ 1021[50], և 1022[51]։

Ակադ. Հ. Մանանդյանը 1921 թ.[52], այնուհետև 1943 թ.[53] հիմք ընդունելով XI դարի հույն պատմիչ Կեդրենոսի վկայությունը, գտնում էր, որ Արծրունիների արտագաղթը տեղի է ունեցել 1016 թ.։ Բազմավաստակ գիտնականը, սակայն, հետագայում հրաժարվեց իր այդ տեսակետից և, ընդհակառակը, վստահելի համարելով Թովմա Արծրունու Պատմության շարունակողի տեղեկությունը, հավանական համարեց 1021 թ.[54]։

Ա. Ալպոյաճյանը Արծրունիների արտագաղթի տարեթիվ է նշում մերթ 1016, մերթ 1021 կամ 1016—1021 թթ.[55]։

Ս. Շալչյանը իր «Վասպուրականի թագավորության պատմությունից» հոդվածում համեմատաբար հանգամանորեն քննարկելով նաև Արծրունիների արտագաղթի տարեթվի խնդիրը, ի վերջո, հենվում է Թովմա Արծրունու Պատմության շարունակողի և Դիվրիկի հիշատակարանի տեղեկությունների վրա և գտնում, որ արտագաղթը կատարվել է 1021 թ.[56]։

Այս բոլորը հետևանք է այն բանի, որ հենց պատմիչների մոտ արտագաղթի վերաբերյալ կան տարբեր ու իրար հակասող հիշատակություններ։ Այն պատմաբանները, որոնք Արծրունիների արտագաղթի տարեթիվ են նշում

---

48 Ս. Շալչյան, Վասպուրականի թագավորության պատմությունից, էջ 66։

49 M. E. Muralt, Essai de chronographie Byzantine, Petersbourg, 1855, էջ 388, և այլն։

50 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 903։ M. J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818, էջ 368։ Մ. Օրմանյան, Ազգապատում, Պոլիս, 1912, էջ 1198 և այլն։

51 G. Schlumberger, L'Épopée Byzantine a la fin du dixième siècle հատ. II, էջ 507 և այլն։

52 Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 23—26։

53 Я. Манандян, Краткий обзор истории древней Армении, М., 1943, էջ 42։

54 Հ. Մանանդյան, Մենագրական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 25, ծան. 5։

55 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիոյ, Գահիրե, 1937, էջ 338, 412, 421—422։

56 ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1949, № 4, էջ 69։

1016 թ., վկայակոչում են Կեդրենոսին, Մատթեոս Ուռհայեցուն, Սմբատ Սպարապետին և Հայսմավուրքը[57]։

Կեդրենոսը Արծրունիների արտագաղթի մասին խոսում է 1016 թ. հունվար ամիսը հիշատակելուց հետո[58]։ Այս տարեթիվը, սակայն, չեն հաստատում մյուս աղբյուրները։ Ընդհակառակը, ինչպես տեսանք, ըստ Դիվրիկի վանքի մասնատուփի արձանագրության, դահաժառանգ Դավիթը 1021 թ. նոր միայն գնում է Կոստանդնուպոլիս՝ Վասպուրականի փոխանակության շուրջ բանակցելու համար։ Անի-Շիրակի թագավոր Գագիկ Ա-ի մահից հետո (այսինքն՝ 1020 կամ 1021 թ.)[59], ինչպես գիտենք, նրա որդի Աշոտը գնում է Վասպուրական և Սենեքերիմ թագավորից օժանդակ զորք ստանում իր եղբոր՝ Հովհաննես-Սմբատի դեմ։ Մի շարք այլ աղբյուրների տվյալներից ևս, ինչպես կտեսնենք ստորև, հետևում է, որ մինչև 1021 թ. Արծրունիները գտնվել են Վասպուրականում։ Միանգամայն անընդունելի է մանավանդ Կեդրենոսի հաղորդած հունվար ամիսը։ Հայկական լեռնաշխարհի խստաշունչ կլիմայական պայմաններում նման ձեռնարկումը տարվա այդ եղանակին կլիներ անմիտ ու կորստաբեր, մանավանդ որ այդ ժամանակ երկրում չկար ոչ թշնամու որևէ ներխուժում և ոչ էլ նրա անմիջական սպառնալիք։ Մինչդեռ դաղթին, Թովմա Արծրունու Պատմության շարունակողի վկայությամբ, մասնակցել են նաև ոչ քիչ թվով կանայք ու երեխաներ[60]։

Արծրունիների արտագաղթի մասին այլ աղբյուրներում 1016 թ. վերաբերյալ տեղեկություն չունենք։

Մեզ թվում է, թե իրավացի չեն մի շարք ուսումնասիրողներ, երբ նման վկայություն են վերագրում Մատթեոս Ուռհայեցուն, Սմբատին և Հայսմավուրքին։ Իրականում այս աղբյուրներում 1016 թ. վերաբերում է Վասպուրականի վրա թուրքերի հարձակմանը և ոչ թե Արծրունիների արտագաղթին։

Ամասիայում եղած ձեռագիր երազահանից հանված մի ժամանակագրության մեջ ասված է. «Սենեքարիմայ գալն ի Սեբաստիա թուին ՆԿԷ (1018)»[61]։ Այս ժամանակագրությունը հասնում է 1607 թ. և հավանաբար բանաքաղություն է մի աղբյուրից, որտեղ, ինչպես տեսանք մի շարք պատմիչների վկայություններից, այդ տարեթվի տակ խոսվում է ոչ թե դաղթի, այլ Վասպուրականի վրա թուրքերի հարձակման մասին։

Արիստակես Լաստիվերտցին, որը մեզ հետաքրքրող դեպքերին ժամանակակից պատմիչ է (Պատմությունն ավարտել է 1071—1072 թթ.), Արծրունիների արտագաղթի տարեթվի մասին, զարմանալիորեն, անում է անորոշ վկայություն։ Նա, խոսելով Վասիլ Բ կայսեր դեմ Փոկասի որդի Նիկեփոր Ծուիզի ապստամբության և Դավիթ Արծրունու կողմից նրա սպանվելու մասին, այնուհետև հաղորդում է. «Քանզի Դավիթ որ Սենեքերիմ կոչիւր՝ որ նեղեալ ի Պարսից՝ տայ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն Վասպուրականի յինքնակալն Վասիլ, և առնու փոխարէն զբ։ զդաքն Սեբաստիա և որ շուրջ զնովաւ գաւառք։

57 Մ. Ասորին, ինչպես տեսանք, հիշատակում է Արծրունիների արտագաղթի շատ ավելի վաղ տարեթիվ՝ 1300 (—989—990) թ., որը, սակայն, չկա այլ աղբյուրում։

58 Cedreni, հատ. II, էջ 464։

59 Մ. Ուռհայեցու մոտ Դաղիկ Ա-ի մահը սխալմամբ վերագրված է ԴՃԻ (961), իսկ Սմբատի մոտ ՆԻ (971) թվականին։

60 Թ. Արծրունի, էջ 500։

61 Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, Թիֆլիս, 1912։

եւ այսոքիկ ոչ հեռի ժամանակաւ, այլ երկու կամ երեք ամօք յառաջ գործեցաւ»[62]։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, տեքստի ակնհայտ խաթարում կա։ Անտեղի է Դավթին նաև Սենեքերիմ անվանելը, որովհետև Արծրունի թագաժառանգը նման կրկնանուն չի ունեցել։ Վասպուրականի փոխանակությունը, ինչպես հայտնի է, կատարել է ոչ թե Դավիթը, այլ Սենեքերիմը որպես թագավոր։ Ըստ Մ. Չամչյանի դա հայտնապես գրչագրական վրիպակ է, մանավանդ, որ նույն պատմիչը այլ տեղում ճիշտ էլ է գրում. «Դաւթի որդւոյ Սենեքերիմայ»[63]։ Վերջապես տարօրինակ է, որ Լաստիվերտցին, որպես դեպքերին ժամանակակից պատմիչ, ստույգ տարեթվեր հաղորդելով մնացած դեպքերի մասին, ասփութորեն է վարվում պատմական այդ կարևոր իրադարձության տարեթվի հետ, տալով անորոշ տեղեկություն։ Մի շարք պատմիչների վկայության համաձայն, ինչպես կտեսնենք ստորև, Նիկեփոր Ծովիդի ապստամբությունը տեղի է ունեցել 1022 թ. դարնանը, նշանակում է, ըստ Լաստիվերտցու, Արծրունիների արտաղաղթը կատարվել է 1019 կամ 1020 թ.։ Այս տարեթվերից ոչ մեկը, սակայն, չի համընկնում որևէ այլ աղբյուրի վկայության հետ։

Այժմ Արծրունիների արտաղաղթի 1021 թ. մասին, որը ինչպես տեսանք, ուսումնասիրողների կողմից համարվում է ավելի հավանական ու ընդունելի տարեթիվ։ Այդ կապակցությամբ սովորաբար վկայակոչվում են ու հիմք ընդունվում Թովմա Արծրունու Պատմության շարունակողի, Սամվել Անեցու վկայությունները և Սեբաստիայի շրջակայքի Դիվրիկի վանքի մասնատուփի արձանագրությունը։ Արծրունիները, ասում է Թովմա Արծրունու Պատմության շարունակողը, համաձայնության եկան կայսրության հետ «...և փոխեցին զհայրենի տունսն իւրեանց Հայկազունքն Արծրունիքն Սենէքերիմ ի թուին հայկազնեան տումարին ՆՀ, (—1021) և դէմ եղեալ գնացին յաշխարհն Յունաց ԺԴՌ արամբք, թող զկանայս և զմանկտիս. և արկան ընդ լծով ծառայութեանն Հոռոմոց»[64]։

Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ Արծրունիների արտաղաղթի մասին երկու տեղ է խոսում, նշելով միևնույն 1021 թ.։ «ՌԲ։ Ելին ազգն թուրքաց և աւերեցին զգաւառն Վասպուրականի. և յոյժ նեղեալ լինէր թագաւորն Նոցա Սենեքարիմ։ Վասն որոյ յետ ԻԲ. ամի նեղութեան՝ ետ զաշխարհն իւր ի Վասիլ թագաւորն ի Նի. թվին»։ Այնուհետև. «ՌԻԳ. ի թուին հայոց ՆՀ. ետ Սենեքարիմ զիւր թէմն ի Վասիլն՝ և էառ զՍեբաստ իւր թեմօքն»[65]։

Այս երկու պատմիչների վկայությունների ուշադիր ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ նրանց հիշատակած 1021 թ. իր մեջ բովանդակում է փոխանակության իմաստ և Արծրունիների արտաղաղթին բնավ չի վերաբերում։ Թովմա Արծրունու Պատմության շարունակողը, ինչպես տեսնում ենք, ասում է, որ «փոխեցին ...ի թուին հայկազնեան տումարին ՆՀ», ապա նոր, թե նրանք «գնացին»։ Եթե պատմիչի նշված տարեթիվը վերաբերեր թե՛ փոխելուն և թե՛ գնալուն, ապա, մեզ թվում է, նա պետք է «գնացին» բառը ևս դներ տա-

62 Ա. Լաստիվերտցի, էջ 20։

63 Մ. Չամչյան, հատ. Բ, էջ 1041։

64 Թ. Արծրունի, էջ 300. Ըստ Գ. Ելյուսմպերժեի հայոց 470 (=ՆՀ) թվականը 1021 թ. մարտի 16-ն է կամ 1022 թ. մարտի 15-ը (L'Épopee Byzantine a la fin du dixième siècle, հատ. III, էջ 507, ծան. 1)։

65 Ս. Անեցի, էջ 104—105։

ոեթիվը հիշատակելուց առաջ, ասելով՝ «փոխեցին զհայրենի տունսն իւրեանց և գնացին Հայկազունքն Արծրունիքն Սենէքերիմ յաշխարհն Յունաց ի թուին հայկազնեան տումարին ՆՀ»։

Սամվել Անեցին ևս, ինչպես տեսնում ենք, երկու տեղում էլ խոսում է 1021 թ. Սենեքերիմի կողմից Վասպուրականը կայսրին տալու և ոչ թե Արծրունիների գաղթելու մասին։ Ուստի սխալվում է Մ. Օրմանյանը, երբ գրում է, թե Սամվել Անեցու հիշատակած այդ թվականը վերաբերում է Սենեքերիմի տեղափոխությանը[66]։ Մեզ թվում է, որ երկու պատմիչների հիշատակած 1021 թ. վերաբերում է սոսկ Վասպուրականի փոխանակության համաձայնագիր կնքելուն և ոչ թե նաև գաղթին։ Նույն իմաստն ունի նաև Դիվրիկի վանքի մասնատուփի վրայի արձանագրությունը։

Վերջապես, ուսումնասիրողներից ոմանք, ինչպես ասացինք, Արծրունիների արտագաղթը վերագրում են 1022 թ., սակայն առանց վերջինս հաստատող որևէ փաստ նշելու։ Նախօրոք ասենք, որ մեր պրպտումների հետևանքով միանգամայն արժանահավատ ու վստահելի աղբյուրներից ձեռք բերած համապատասխան տվյալները համոզիչ կերպով խոսում են այդ տարեթվի օգտին։

XI դարի արաբ պատմիչ Յահյա Անտիոքացուց մեզ է հասել նրա կազմած տարեգրության մի մասը, որտեղ պատմությունն ավարտվում է 1031 թ.։ Ենթադրում են, որ նա պատմությունը պետք է հասցրած լինի մինչև իր կյանքի վերջը՝ 1066 թ.[67]։ Տարեգրությունը կազմելիս նա օգտվել է արաբական, հունական աղբյուրներից և եկեղեցական արխիվային փաստաթղթերից։ Յահյայի մոտ եղած պատմական ու ժամանակագրական փաստերը ստույգ են և, ինչպես ակադ. Ֆ. Ի. Ուսպենսկին էլ է հաստատում, պատմական քննադատական միտքը ամենայն վստահությամբ նրա հաղորդած տվյալներին կարող է հաճախ առաջնություն տալ ավելի ուշ շրջանի գրողների տեղեկությունների նկատմամբ[68]։

Վասիլ Բ կայսրը, ըստ Յահյա Անտիոքացու, ջախջախում է Բյուզանդիայի դեմ ապստամբած արխազ-վրացական թագավոր Բեոդգիին և հրի ու սրի մատնում Քուռ գետից հարավ ընկած նրա բոլոր գավառները։ «Զմեռոր մոտեցավ,— ասում է նույն պատմիչը,— և Վասիլ կայսրը գնաց Տրապիզոն, որպեսզի զորքը ձմռանն այնտեղ անցկացնի, իսկ հետո կրկին վերադառնա արշավանքի։ Եվ այդ ժամանակ Սենահարիբը (Սենեքերիմը— Վ. Ի.)՝ Ասպրականի (Վասպուրականի— Վ. Ի.) թագավորը տվեց իր բոլոր բերդերը, հողերը և ամբողջ ասպրականյան երկիրը Վասիլ կայսրին»[69]։

Ըստ Յահյայի այդպիսով, Սենեքերիմը Վասպուրականը զիջել է Վասիլ Բ-ին ու գաղթել Բյուզանդիա այն ժամանակ, երբ կայսրը գտնվել է Տրապիզոնում։ Վասիլ Բ-ն, պատմիչների վկայությամբ, Կոստանդնուպոլսից արևելք՝ արխազ-վրացական ապստամբների դեմ է եկել 1021 թ. գարնան կամ ամռան վերջին, որովհետև, ինչպես տեսանք, ապստամբների դեմ մինչ ձմռան սկսվելը նա գործել է երեք կամ վեց ամիս[70]։ Յահյա Անտիոքացու տարեգրության թարգ-

66 Մ. Օրմանյան, Ազգապատում, Պոլիս, 1912, էջ 1198։

67 Ф. И. Успенский, Император Василий Болгаробойца, ЖМНП, апрель, 1884, էջ 283։

68 Նույն տեղում, էջ 305։

69 Яхя Антиохийский, էջ 62։

70 Ա. Լաստիվերտցի, էջ 11, 16. «Տեսիլ սր վարդապետին Յոհաննիսի՝ որ մականուն կոչեն կոչին», էջ 19։ Մ. Ուռհայեցի, էջ 49։ Ամրատ, էջ 28։ „Источник грузинских Летописей. Три хроники" (пер. с груз., Е. С. Такаишвили), էջ 161—162։

մանիչ ակադ. Վ. Ռ. Ռոզենի ասելով, արաբ պատմիչի հիշատակած ձմեռը ակներևորեն 1021—1022 թթ. ձմեռն է[71]։ Եվ իրոք, երբ Վասիլը, գտնվելով Տրապիզոնում, նավատորմ է կազմակերպում Արխազիա արշավելու համար, Փոքր Ասիայում ծագում է ապստամբություն Նիկեփոր Քսիֆիի և Վարդ Փոկասի որդի Նիկեփոր Ծովիգի գլխավորությամբ։ Շուտով Քսիֆին դավադրաբար սպասում է Ծովիգին. «Եվ դա եղավ,— ասում է Յահյան,— Աստվածածնի վերափոխման օրը, այսինքն 413 թ. Ջումադի I 14-ին (1022 թ. օգոստոսի 15-ին)[72]։

Ծովիգի սպանությունը 1022 թ. են հիշատակում նաև հայկական աղբյուրները[73]։

Արիստակես Լաստիվերտցին ասում է. «Իսկ ինքնակալն (այսինքն՝ Վասիլ Բ կայսրը— Վ. Ի.) զձմերոցսն ի գլուխ հանեալ ի մարմանդսն Պոնդոսի, ի հասանել գարնանարեր ժամանակին, խաղայ դարձեալ նոյն հետայն ի վերայ Տայոց. և անցեալ ընդ բազում օթևանօք՝ գայ բնակի ի գավառն Բասենոյ»։ Նույն պատմիչի ասելով, այդ ժամանակ տեղի է ունենում Նիկեփոր Ծովիգի ապստամբությունը, որին սկզբում միանում է Դավիթ Արծրունին, բայց այնուհետև նա դավադրաբար սպանում է Ծովիգին[74]։ Այս հանգամանքը հաստատում են նաև այլ պատմիչներ[75]։ Ուրեմն Արծրունիները 1022 թ. «ի հասանել գարնանարեր ժամանակին» արդեն Սեբաստիայում էին։

Ակադ. Վ. Ռ. Ռոզենի կարծիքով անկասկած են Յահյա Անտիոքացու տվյալները, ըստ որոնց Վասպուրականի գիշումը կայսրության տեղի է ունեցել 1021 թ. վերջին կամ 1022 թ. սկզբին[76]։ Ճիշտ է վերջինը, որովհետև եթե փոխանակության բանակցությունները, ինչպես տեսանք, տեղի են ունեցել 1021 թ. առաջին կեսին, իսկ Վասպուրականի բուն հանձնումը՝ Վասիլ Բ-ի Տրապիզոնում գտնվելու ժամանակ (1021 թ. դեկտեմբեր —1022 թ. փետրվար)· ապա Արծրունիների գաղթը Բյուզանդիա կարող էր տեղի ունենալ 1022 թ. ձմռան վերջին կամ ավելի ճիշտ՝ գարնան սկզբին։

Գրիգոր Ակռոնցու Սեբաստիայում գրած ավետարանի հիշատակարանը (1066 թ) հաստատում է Վասպուրականից Սեբաստիա տարվա այդ եղանակին Արծրունիների արտագաղթի փաստը։ «Ես,— գրել է նա,— Գրիգոր քահանայ ի նուազել ազգիս Հայոց ի ժամանակի հալածանաց մերոց յազգէն Իսմայելի, սահեալք ի կողմանց արևելից ի լերանցն Այրարատա՝ ի գեղջէն, որ կոչի Արկոռի, զկնի աստուածասէր բազաւորին մերոյ Սենեքերիմայ[77]. եկեալ բնակեցաք ի քաղաքիս Սեբաստիա, ուր քառասուն վկայքն հեղին զարիւնս իւրեանց, մարտ եկեալ[78] ընդ ազգոյ դառնաշունչ և ընդ սատ[ն]ամանեաց ջրոյ, և անդէն զկնի

[71] В. Р. Розен, Император Василий Болгаробойца, էջ 373, ծան. 373։

[72] Яхя Антиохийский, էջ 64։

[73] Ա. Լաստիվերտցի, էջ 18—21. Մ. Ուռհայեցի, էջ 50—51. Սմբատ, էջ 30 և այլն։

[74] Ա. Լաստիվերտցի, էջ 18, 20, 21։

[75] Մ. Ուռհայեցի, էջ 51. Սմբատ, էջ 30։

[76] В. Р. Розен, նշվ., աշխ., էջ 377, ծան. 373։

[77] Ըստ ակադ. Հ. Աճառյանի, Գրիգոր քահանան Այրարատի Ակռոի գյուղից Սեբաստիա է գաղթել Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հետ («Հայոց անձնանունների բառարան», հատ. Ա, էջ 551—552)։

[78] Պետք է լինի՝ «մարտ եղեալ»։

ամաց հնգից վախճանէր բազմաշնորհ և մեծապատիւ հայրն իմ Անանիա քահանա ի թագաւորական քաղաքին ի Բիւզանդիոն»[79] *(ընդգծումը մերն է—Վ. Ի.)։*

Դա 1022 թ. էր, երբ Արծրունիները, լքելով Վասպուրականը, գաղթել են Սեբաստիա։ Այդ տեսակետից վերին աստիճանի ուշագրավ են Սեբաստիայի եվդոկիա գավառի Պիզերի մոտ գտնված Ոսկեբերան (առաջ՝ Ս. Նշան կամ Ս. Խաչ) վանքի երկու արձանագրությունները։

«ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՅ ԵԿԵՆ ԵՒ ՇԻՆԵԱՑ ՏԱՃԱՐՍ...
Ն Հ Ա (1022)»,

այնուհետև՝

«ԿԱՆԳՆԵՑԱԻ
ԱՐ. ԽԱՉՍ
ԱՐ. ՆՇԱՆԻ
ՀԱՆԴԵԱԻ ԱՐԾՐՈՒՆԻ
ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐՔԱՅ
Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ
Ն Հ Ե (1026)»[80]։

Ըստ այս արձանագրությունների, ուրեմն, Սենեքերիմ Արծրունին Բյուզանդիա է եկել 1022 թ. և մահացել է 1026 թ., այսինքն՝ Սեբաստիայում նրա թագավորելու տարիներն են 1022—1026 թթ.։

Այս արձանագրությունները, որոնց հաղորդած տվյալների արժանահավատ լինելը կասկածի ենթակա չէ, համոզիչ կերպով ասում են այն մասին, որ Արծրունիները Վասպուրականից Սեբաստիա են գաղթել 1022 թ.։

О ПЕРЕСЕЛЕНИИ АРЦРУНИДОВ

В. К. ИСКАНЯН

(Резюме)

До настоящего времени в историографии не установлена точная дата переселения Арцрунидов в Византию, а причины этого переселения многими историками толковались и оценивались весьма односторонне.

Путем анализа первоисточников в статье показывается, что переселение Арцрунидов было следствием нашествия турок на Васпуракан, с одной стороны, и развивающейся византийской экспансии — с другой. Этому способствовала также феодальная раздробленность страны. Переговоры между Византией и Арцрунидами по вопросу об обмене Васпуракана проводились в Константинополе в 1021 г., а переселение в Себастию имело место в 1022 г.

79 Գառեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, էջ 248—249։

80 Տե՛ս Արշակ Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո Հայոց, Գահիրե, 1952, էջ 167—168։